ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/23

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու 2019թ. ապրիլի 19-ի թիվ 3-րդ արձանագրությամբ հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին և 2019թ. ապրիլի 29-ի թիվ 4-րդ արձանագրությամբ հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին

որոշումները, և ընդունել՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձի 06.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 08.05.2019թ., 16.05.2019թ. և 23.05.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 23.05.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.06.2019թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ն «Դեղորայքի և պաավսատեյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հասրատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. ապրիլի 8-ի որոշմամբ, որի հրավերի թիվ 26, 27 և 28-րդ չափարաժիններով պահանջվում են «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ» տարբեր կազմություններով և տեսքերով. որոնցից թիվ 26-րդ չափաբաժնով պահանջվում է «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ /Հակաբակտերիալ օճառ 1լ-ի/ տեսքով ախտահանիչ միջոց 1 լ 30 հատ:

2019թ. ապրիլի 19-ին կայացած նիստում «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 3-րդ արձանագրությունը, որով թիվ 26-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Արմենֆարմ» ՄՊԸ-ին:

2019թ. ապրիլի 25-ին «Խաչպար» ՍՊԸ-ն դիմել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին և տեղեկացրել, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով կազմված է գնումների գործընթացները կարգավորող մի քանի իրավական ակտերի պահանջների խախտումներով. ուստի ենթակա է մերժման:

2019թ. ապրիլի 30-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է 2019թ. ապրիփ 29-ով թվագրված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով դնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից կազմած թիվ 4-րդ արձանագրությունը, որով թիվ 26-րդ

չափաբաժեի մասով հաղթող մասնակից է ճանաչել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, որին (ինչպես նաև մյուս հաղթող ճանաչված մասնակիցներին) առաջարկել են կնքել պայմանագրեր:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով բողոքարկում է Պատվիրատուի՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու 2019թ. ապրիլի 19-ի թիվ 3-րդ արձանագրությամբ հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին և 2019թ. ապրիլի 29-ի թիվ 4-րդ արձանագրությամբ հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները, և ընդունել որոշում՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին:

1) Համաձայն «Արտաքին Տեանսակաե Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի ախտահանիչ միջոցները դասվում են 380894 դասակարգիչով՝

Համաձայն «ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱՋԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀՀ Օրենքի հոդված 1-ով հաստատված ցանկի՝ «3808 94 ԱՏԳ ԱԱ ծածկագիրը կրող «Ախտահանող միջոցներ»-ը ՀՀ տարածք ներմուծման ժամանակ ազատված են ԱԱՀ վճարելուց:

Համաձայն ՀՀ «ԱԱՀ-ի մսաին» օրենքի թիվ I հոդվածի.

Հոդված 1. Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փողերում:

Համաձայն ՀՀ «ԱԱՀ-ի մսաին» օրենքի թիվ 15 հոդվածի սահմանման՝

Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: ԱԱՀ-ից ազատվում են...:

ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433. 8434, 8436. 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի. 3808 91, 3808 92, 3808 93. 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների

սերմացուների և տնկանյութի, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների իրացումը:

Այսինքն 3808 94 ԱՏԳ ԱԱ. դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքների ախտահանիչ միջոցների շրջանառությունը ազատված է ԱԱՀ-ից, հարկվող շրջանառության նկատմամբ այն հաշվարկել չի կարելի, ուստի «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտում հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկելը չի համապատասխանում ՀՀ «ԱԱՀ-ի մասին» օրենքի թիվ 15-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանումների պահանջներին:

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալների կամ դրա մասին ստանալու, իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Համաձայն «Արեմնֆարմ» ՍՊԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ներկայացված մաքսային հայտարարագրի տվյալների, որպես ախտահանիչ նյութեր այնտեղ հայտարարագրված են թիվ 1-ին և թիվ 3-րդ ապրանքները, որոնք մարքսազերծվել են առանց ԱԱՀ-ի վճարման՝ 380894 10000 և 380894 0000 ծածկագրերով, իսկ հայտարարագրված թիվ 2-րդ օճառ պարունակող կամ չպարունակող ապրանքը մաքսազերծվել է ԱԱՀ-ով՝ 340130 00000 ԱՏԳ ԱԱ ծածկագրով, որտեղ սակայն հայտարարատուի կողմից սխալ ձևակերպում է արված, սահմանված «340130 00000-օճառ պարունակող կամ չպարունակող մակերեսյթաակտիվ օրգանական նյութեր և միջոցներ մաշկը լվանալու համար հեղուկի կամ կրեմի տեսքով, բաժնեծրարված մանրածախ վաճառքի համար»-փոխարեն այնտեղ ներառված են «...հակասեպտիկ օճառ ձեռքերի համար...» բառերը, որոնք ոչ միայն հակասում են ԱՏԳ ԱԱ 340130 00000 ծածկագրի սահմանումներին, այլ նաև հետագայում հիմք են հանդիսանում այդ ապրանքը որպես «...հակասեպտիկ օճառ ձեռքերի համար...», առաջարկել տարբեր բուժկանխարգելիչ կազմակերպությունների կողմից հայտարարվող այն մրցույթներում. Այդ

թվում նաև «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասում որտեղ պահանջվում են ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ մշակման համար նախատեսված ախտահանիչ միջոցներ, որոնց իրացումը օրենքով ազատված է ԱԱՀ-ից հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չի հաշվարկվում, ի տարբերություն այլ ապրանքների:

Ախտահանիչ միջոցների կիրառումը ՀՀ բուժկանխարգելիչ կազմակերպություններում և ոչ այլ բժշկակուն կազմակերպություններում, կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության Նախարարի 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված «N 3.1.1 029-2015 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄՆԵՐԸ»-ի հավելվածով, համաձայն որի արդ ախտահանիչ միջոցները պետք է ունենան ՀՀ ԱՆ կողմից հրամանով հաստատված կիրառման մեթոդական հրահանգներից:

Խնդրում եմ ՀՀ ԳԲԽ-ին, որպեսզի պահանջի «Արմենֆարմ» ՍՊԸ-ից ներկայացնել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով հրավերի թիվ 26-րդ չափաբաժնի մասով իրենց կողմից առաջարկված ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ մշակման համար նախատեսված հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների կիրառման մեթոդական հրահանգը հաստատված ՀՀ ԱՆ հրամանով:»:

3. <u>«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.05.2019թ. գրությամբ դիմել է «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուն ծանուցված լինելով նշանված նիստերի օրվա, ժամի և վայրի մասին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 09.04.2019թ. հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 26-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ-Հակաբակտերիալ օճառ 1լ:

Հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման…:

Հրավերի 2-րդ մասի թիվ 4 հավելվածի՝ գնային առաջարկի օրինակելի ձևում նշվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 26-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել նաև «Արմենֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընկերությունը թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով 26-րդ չափաբաժնի համար նախատեսել է ԱԱՀ-ի գումարը:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում www.gnumner.am կայքում 30.04.2019թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ 26-րդ չափաբաժնի մասով «Արմենֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրած մասնակից:

www.petekamutner.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն */ՀԿՀՀ 00039741/* հանդես է գալիս որպես ԱԱՀ վճարող:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.06.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման...:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետով սահմանված են Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն հանդիսանալով ԱԱՀ վճարող, հրավերով նախատեսված կարգով գնային առաջարկում առանձին տողով նախատեսել է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվել է առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման, ինչն օրենսդիրն սահմանել է իմպերատիվ կերպով:

Ինչ վերաբերում է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված այն պնդմանը, որ «Արեմնֆարմ» ՍՊԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված մաքսային հայտարարագրի տվյալների հայտարարագրված օճառ պարունակող կամ չպարունակող ապրանքը մաքսազերծվել է ԱԱՀ-ով՝ 340130 00000 ԱՏԳ ԱԱ ծածկագրով, որտեղ սակայն հայտարարատուի կողմից սխալ ձևակերպում է արված, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որևէ նշված փաստի վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց չի ներկայացվել: Բացի այդ, նշված խնդիրները առհասարակ դուրս են գալիս գնահատող հանձնաժողովի՝ մանակիցները հայտերը գնահատելու իրավասության շրջանակներից, քանի որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով և բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող

հայտերը, իսկ տվյալ պարագայում «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որևէ խախտում չի արձանագրվել, ինչը կհանգեցներ Ընկերության հայտը մերժելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.05.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**